ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«____»_____202 թ.

№ _____

«Աշխատանք» ՍՊԸ-ի և «Գոռտիգ» ՍՊԸ-ի տնօրեններին
«Աշխատանք» ՍՊԸ ՀՎՀՀ 00401912
ք. Երևան, Արին Բերդի 5-րդ նրբ., 1ուն 1
«Գոռտիգ» ՍՊԸ ՀՎՀՀ 01802276
ք. Երևան Շիրակի 94 ա

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աշխատանք» ՍՊԸ (համատեղ գործունեություն «Գոռտիգ» ՍՊԸ-ի հետ, այսուհետ՝ Կոնսորցիում) միջև 18.08.2017թ. կնքված N ՍԸԱՇՁԲ-10/6-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2019թ. ընթացքում կատարել 120,000,000 (մեկ հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, սակայն 39,426,838 (երեսունինը միլիոն չորս հարյուր քսանվեց հազար ութ հարյուր երեսունութ) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը **19.08.2022թ.-ին** միակողմանի լուծում է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Կոնսորցիումը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***4,987,495 (չորս միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամ***՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և **2,179,800 *(երկու միլիոն հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ***՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին ենթակա է գանձման **43,596,000 *(քառասուներեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022թ. հոկտեմբերի 13-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման գումարը, ապա Կոնսորցիումը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնի բնօրինակները ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am